ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎԻ ՀԱՆՁՆՈՒՄ

Սովետական գիտության զարգացմանը մատուցած մեծ ծառայությունների համար այս տարվա մարտին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Արմենակ Մնջոյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Մայիսի 23-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ կառավարական բարձր պարգևի հանձնմանը նվիրված երեկո։

Բացելով երեկոն, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ասաց, որ հանրապետության գիտնականների մեծ կոլեկտիվը Ա. Մնջոյանին ճանաչում է որպես անխոնջ ու աշխատասեր մարդու, որն իր ամբողջ կյանքը նվիրել է գիտությանը։ Կառավարական բարձր պարգևը նրա ձեռք բերած գիտական արդյունքների լավագույն գնահատականն է։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընթերցելուց հետո Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը գիտնականին է հանձնում Լենինի շքանշան, «Մուրճ ու մանգաղ» ոսկե մեդալ, Սոցիալիստական աշխատանքի հերոսի դիպլոմ և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի անունից ջերմորեն շնորհավորում է գիտնականին կառավարական բարձր պարգևին արժանանալու առթիվ, նրան ցանկանալով քաջառողջություն և նորանոր հաջողություններ։

Կառավարական բարձր պարգևի առթիվ անվանի գիտնականին ողջունեցին հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Մանվելյանը, թղթակից-անդամներ Ս. Միրզոյանը, Ա. Գասպարյանը, Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանի դիրեկտոր Կ. Խուդոյանը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի տեխնոլոգիական ֆակուլտետի դեկան Ջ. Հովհաննիսյանը, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող Ն. Հակոբյանը։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ ակադ. Ա. Մնջոյանը։

Երեկոյին ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Ռ. Մուրադյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը։

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ